

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԻՆԵ ԳԵՎՈՐԳԻ**

**ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԻ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ  
ԴԱՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

ԺԳ.00.01- «Մանկավարժության տեսություն և պատմություն»  
մասնագիտությամբ մանկավարժական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

**Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր**

ԵՐԵՎԱՆ 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական գիտությունների  
թեկնածու, դոցենտ Յ.Մ.Գրիգորյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մանկավարժական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր Ռ.Ն.Ազարյան

Հոգեբանական գիտությունների  
թեկնածու, դոցենտ Ռ.Հ. Պողոսյան

Առաջատար կազմակերպություն՝

Վանաձորի Հովի. Թումանյանի  
անվան պետական մանկավարժական  
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թ. սեպտեմբերի 26-ին ժամը 14.<sup>00</sup>-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՅ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 375010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. օգոստոսի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,  
մանկ. գիտ.թեկնածու, դոցենտ՝



Ա.Վ. ԱՎԱԳՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Դետագոտության արդիականությունը:** Դաստիարակությունը՝ որպես պատմական փորձին մարդու հաղորդակցման գործընթաց, իր բովանդակային ու նպատակային հիմունքներով մշտապես որոշվում է հասարակության առաջատար պահանջմունքներով: Սոցիալական կողմնորոշիչների փոփոխություններն անխուսափելիորեն հանգեցնում են դաստիարակության խնդիրների, ուղղությունների, դաստիարակչական աշխատանքների կազմակերպման ձևերի վերանայման և նորովի վերագնահատման անհրաժեշտության: Այսօր մեզանում փոփոխվող և զարգացող հասարակության մեջ առանձնահատուկ կարևորություն են ստանում անձի սեռական դաստիարակության, նրա սեռադերային սոցիալականացման հիմնախնդիրները, համամարդկային և ազգային արժեքներին նրա շփումները, որոնց արդյունքում ամրագրվում և ամրակայվում են սերունդների պատմամշակութային դարավոր փորձն ու ձեռքբերումները: Աճող սերնդի սեռական դաստիարակության խնդիրն այսօր հույժ արդիական է և իր վրա է հրավիրել սեռաբանների, բժիշկների, հոգեբանների, սոցիոլոգների, իրավաբանների, մանկավարժների ուշադրությունը: Անցյալ դարի 20-30-ական թվականներից սկսած երեխաների ըստ սեռերի տարբերակված դաստիարակության նպատակահարմարության մասին խոսում էին բազմաթիվ ճանաչված մանկավարժ հոգեբաններ (Պ.Պ. Բլոնսկի, Ա.Ս. Մակարենկո, Ն.Կ. Կրուպսկայա և ուրիշներ): Մի շարք պատճառներով խորհրդային շրջանում սեռական դաստիարակության խնդիրը գործնականում չլուծվեց. խորհրդային մանկավարժությունը հայտնվեց «անսեռ» վիճակում՝ կողմնորոշված դեպի վերացարկված երեխան, հաշվի չառնելով նրա այնպիսի կարևոր չափորոշիչներ, ինչպիսիք են մանկավարժահոգեբանական առանձնահատկությունները: Դ.Ն.Իսաևան, Ի.Պ.Պողոսյան, Ի.Ս.Կոնը և ուրիշներ մասնավորապես ընդգծում են երեխաների սեռային առանձնահատկությունների հաշվառման սկզբունքի անհրաժեշտությունը: Գիտնականների մեկ այլ խումբ՝ Վ.Ե.Կազան, Դ.Վ.Կոլեսով, Ա.Բ.Դոբրովիչ, Վ.Վ.Նազան և ուրիշներ իրավացիորեն կարծում են, որ սեռային տարբերակվածության ձևավորումը ընտրության երկարատև կենսասոցիալական գործընթաց է, սեռային երկու մոդելներից մեկի տիրապետում, որն ընդունելի է սոցիալական այն միջավայրում, որտեղ երեխան զարգանում է և որտեղ տեղի է ունենում նրա սոցիալականացումը: Սեռական լուսավորության հարցերն ուսումնասիրվել են Դ.Ն. Իսաևի, Վ.Ե. Կազանի, Ա.Գ.Խրիպկովայի, հայ իրականության մեջ Լ.Վ.Թորգոմյանի, Յ.Մ.Գրիգորյանի և այլոց կողմից, սեռական հոգեբանության հարցերը՝ Ա.Բ.Դոբրովիչի, Ի.Ս.Կոնի, Վ.Վ.Նազանի, Վ.Պ.Նեստերենկոյի և այլոց կողմից: Նշված հետազոտություններում առանձնանում է էթնիկ-մանկավարժական ուղղությունը, որի ներկայացուցիչները (Ն.Բ.Աբաևան, Մ.Գ.Դավլեթչին, Ա.Էլանգոն և ուրիշներ) տարբեր սեռի երեխաների փոխհարաբերությունները դիտարկում են դաստիարակության ազգային ավանդույթների հաշվառման տեսանկյունից: Մի շարք հետազոտություններ մվիրված են տղաների և աղջիկների միջանձնային հարաբերությունների ձևավորմանը (Տ.Վ.Բենդասս, Վ.Ֆ.Գալկինա, Յա.Լ.Կոլոմինսկի, Ե.Վ.Սապոգովա և ուրիշներ): Վերոնշյալ ուսումնասիրություններում հստակեցվել է այն տեսակետը, որ հատկապես դեռա-

հասության շրջանում է ձևավորվում սեռականությունը և դեռահասի անհատական կենսաձևը, ուրեմն անհրաժեշտ է հենց սեռահասունացման շրջափուլում սովորեցնել նրան ճիշտ կառավարել իր հույզերը, ցանկություններն ու սեռական վարքագիծը. սրանով խիստ արդիական է դառնում դեռահասի սեռական դաստիարակության խնդիրը:

Մեր հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ժամանակակից հայկական դպրոցներում սեռական դաստիարակության ոլորտում կան լուրջ և չլուծված խնդիրներ, միաժամանակ առկա են ներքոնշյալ հակասությունները.

- հասարակության արագ փոփոխվող պահանջների և սովորողների սեռական դաստիարակության տարերային բնույթի միջև,
- հանրակրթական դպրոցում սովորողների սեռական մշակույթի ձևավորման բովանդակության, այլընտրանքային մեթոդների մշակման անհրաժեշտության և մանկավարժության տեսության և պրակտիկայում դրանց անբավարար մշակվածության հաղթահարման միջև:

Մեր հետազոտության հայեցակարգը հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացում դեռահասների սեռական դաստիարակության մեջ վերոնշյալ հակասությունների հաղթահարման մանկավարժական արդյունավետ պայմանների ստեղծման անհրաժեշտ երաշխիքների և միջոցների ապահովումն է: Նշված հակասությունների բացահայտումով և դրանց հաղթահարման ճիշտ ուղիների և միջոցների ընտրության անհրաժեշտությամբ է հիմնավորվում սույն թեմայի ընտրությունը. դրանով պայմանավորվում է նաև հետազոտության արդիականությունը:

**Չետազոտության նպատակը** դպրոցականների սեռատարիքային անցումային փուլերի առանձնահատկությունների և սեռական դաստիարակության արդի խնդիրների տեսական ու գործնական հիմնավորումը և սեռական դաստիարակության գործընթացի կազմակերպման մանկավարժական արդյունավետ պայմանների ապահովումն է:

**Չետազոտության օբյեկտը** սովորողների սեռական դաստիարակության գործընթացն է միջին և ավագ դպրոցական տարիքում:

**Չետազոտության առարկան** սովորողների սեռական դաստիարակության գործընթացի արդյունավետ իրականացման մանկավարժական պայմաններն ու մոտեցումներն են:

**Չետազոտության գիտական վարկածը:** Դեռահասի սեռական դաստիարակության գործընթացը կլինի արդյունավետ և կնպաստի նրա սեռադերային սոցիալականացմանը, սեռական գրագիտության բարձրացմանը, ինքնաճանաչողության խնդիրներում և տարբեր սեռերի միջանձնային հարաբերություններում դրական ակտիվ կենսադիրքի ապահովմանը, եթե՝

- սեռական դաստիարակությունը դիտարկվի որպես դաստիարակության ամբողջական գործընթացի անհրաժեշտ բաղադրատարր և իրականացվի դաստիարակության մյուս բաղադրատարրերի հետ փոխադարձ կապի մեջ,
- սեռական դաստիարակությունը հիմնվի համամարդկային արժեքների, ազգային ավանդույթների, սովորույթների, ազգային բնավորության և հասարա-

կական-սոցիալական փորձի վրա,

- սեռական դաստիարակության գործընթացում ապահովվեն մանկավարժական հետևյալ պայմանները՝ սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառումը, դպրոցի և ընտանիքի սերտ համագործակցությունը, դաստիարակության մարդասիրական ուղղվածությունը,
- սեռական դաստիարակությունը հիմնվի անձնակենտրոն մոտեցման սկզբունքի և գործընկերային հարաբերությունների վրա, դաստիարակության ընթացքում ապահովվեն «սուբյեկտ-սուբյեկտ» հարաբերությունները, երկխոսությունները, համագործակցային հարաբերություններին նպաստող դաստիարակության արդյունավետ միջավայրը:

***Պետազոտության խնդիրները :***

1. Սահմանել սեռական դաստիարակության հասկացությունները, համակարգել դրանք, առանձնացնել սեռական դաստիարակության խնդիրները, բացահայտել և վերլուծել այդ ուղղությամբ պատմականորեն ձևավորված և այսօր էլ տիրապետող հանրահայտ մոտեցումներն ու դիրքորոշումները:
2. Ուսումնասիրել սեռական դաստիարակության խնդրի դրվածքն անտիկ շրջանի փիլիսոփաների և դասական մանկավարժների հայացքներում, բացահայտել այդ ուղղությամբ պատմական դրական փորձի առկայությունը, բացորոշել դրա կիրառելիության հնարավորությունները սեռական դաստիարակության արդի փուլում:
3. Բնութագրել սեռատարիքային անցումային փուլերի առանձնահատկությունները, բացահայտել և գիտափորձով հիմնավորել հանրակրթական դպրոցում սեռական դաստիարակության արդյունավետությունն ապահովող մանկավարժական պայմանները:
4. Տեսականորեն առաջադրել և հիմնավորել սովորողների սեռական դաստիարակության մանկավարժական պայմանները՝ տարբեր սեռի սովորողների նկատմամբ տարբերակված մոտեցման հանգամանքներում:
5. Գիտափորձով ստուգել առաջադրված մանկավարժական պայմանները:

***Պետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել*** երեխաների հոգեբանային զարգացման տեսությունը (Ե.Ա.Արկին, Պ.Պ.Բլոնսկի, Ա.Բ. Չալկինդ, Ջ.Ֆրոյդ, Է.Ֆրոմմ), դեռահասների զարգացման ֆիզիոլոգիական օրինաչափությունները (Ի.Ա.Արշավսկի, Տ.Մ.Սարյուտինա), անձի հոգեբանության տեսությունը (Լ.Ս.Վիգոտսկի, Ա.Ն.Լեոնտև, Ա.Լ.Ռուբինշտեյն), անձի դաստիարակության տեսությունը (Ս.Պ.Մանուկյան, Օ.Ս.Բոգդանով, Դ.Ս. Գրիշին, Բ.Տ. Լիխաչև, Ն.Ե.Շչուրկովա), երեխաների տարիքային առանձնահատկությունների, տարբեր սեռի երեխաների փոխհարաբերությունների և սեռական դաստիարակության վերաբերյալ հետազոտություններ (Դ.Ն.Իսաև, Վ.Ե.Կազան, Դ.Վ.Կոլեսով, Ի.Ս.Կոն, Ա.Գ. Խրիպկովա, Յ.Մ.Գրիգորյան), երիտասարդների անձնական և ամուսնաընտանեկան կյանքին նախապատրաստելուն նվիրված հետազոտություններ (Ի.Ա.Աբրամով, Վ.Ի.Բարսկի, Ի.Վ.Բեստուժև-Լադա, Ի.Վ.Գրեբեննիկովա, Լ.Վ.Թորգոյան):

***Պետազոտության մեթոդների*** ընտրությունը կատարվել է քննարկվող հիմնահարցերի բնույթին և լուսաբանվող մանկավարժական երևույթների, փաստերի

առանձնահատկություններին համապատասխան: Հետազոտության մեթոդներ են հանդիսացել՝

- հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ գրականության տեսական վերլուծություն, համեմատման, համադրման, գիտահետազոտական մեթոդները,
- փորձարարական վերլուծության մեթոդներ, դիտումներ, հարցումներ, զրույցներ, դիագնոստիկ և ստուգիչ թեստեր, մանկավարժական գիտափորձ, գիտափորձի ամփոփում և ստուգված արդյունքների վերլուծություն:

***Հետազոտության գիտական նորույթը:***

- Բացահայտվել և ճշգրտվել են «սեռական ցանկասիրություն», «սեռական մշակույթ», «սեռային հավասարում», «սեռային տարբերակում», «սեռային զարգացում», «սեռական դերեր», «սեռական առողջություն», «սեռական իրավունք» և այս կարգի այլ հասկացություններ:
- Ուսումնասիրվել և վերլուծվել է սեռական դաստիարակության խնդրի դրվածքն անտիկ շրջանի փիլիսոփաների և դասական մանկավարժների ստեղծագործություններում, բացահայտվել է այդ ուղղությամբ պատմական հարուստ փորձի առկայությունը և դրա կիրառելիության հնարավորությունները հանրակրթական ոլորտի զարգացման և սեռական դաստիարակության բնագավառում կանխատեսվող բարեփոխումների պայմաններում:
- Բացորոշվել և սահմանվել է սեռական դաստիարակության նպատակը (նեղ և լայն իմաստով), որոշարկվել են սեռական դաստիարակության առանձնահատկությունները, միջոցներն ու մեթոդները հանրակրթական միջին և ավագ դպրոցներում, որոշվել են սեռական դաստիարակության բարոյախմացական դրդապատճառներն ու արժեքային բաղադրատարրերը, բնորոշվել է սեռական դաստիարակության էությունը և բովանակությունը հանրակրթության բարեփոխման և զարգացման արդի պայմաններում:
- Մշակվել է միջին և ավագ դպրոցականների սեռական դաստիարակության մանկավարժական մոդելը, տեսականորեն հիմնավորվել և վերաիմաստավորվել է դաստիարակության ամբողջական համակարգում սեռական դաստիարակության տեղն ու դերը և փոխադարձ կապը դաստիարակության մյուս բաղադրատարրերի հետ:
- Տեսականորեն հիմնավորվել և գիտափորձով հաստատվել են միջին և ավագ դպրոցականների սեռական դաստիարակության արդյունավետ իրականացման մանկավարժական պայմանները, որոնք կարող են ներդրվել մեր կողմից առաջադրվող «Սեռական դաստիարակության հիմունքներ» նախասիրական պարամունքի կրթադաստիարակական գործընթացում և այդ դասընթացի չափորոշիչների մշակման աշխատանքներում:

***Հետազոտության տեսական նշանակությունը:***

- Ամբողջացվել և համակարգվել են միջին և ավագ դպրոցականների սեռական դաստիարակության բովանդակության հայեցակարգային հիմնադրույթները, հետևաբար սույն հետազոտությունը որոշակի ներդրում է սեռական դաստիարակության տեսության հիմնավորման և հաստատման տեսանկյունից:
- Հստակեցվել և ճշգրտվել են սեռական դաստիարակության էության, բովան-

դակության և սեռատարիքային անցումային փուլերի առանձնահատկությունների, դաստիարակության ամբողջական համակարգում սեռական դաստիարակության տեսական նշանակության վերաբերյալ պատկերացումները:

- Զետազոտության արդյունքները պարունակում են տեսական դրույթներ և մոտեցումներ, որոնք խորացնում են մեթոդաբանական գիտելիքները և պատկերացումները դպրոցականների սեռական դաստիարակության մասին, բացահայտում են դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացում դրա կազմակերպման մանկավարժական պայմանները:

***Չետազոտության գործնական նշանակությունը:***

- Առաջադրվող սեռական դաստիարակության մոդելի և մանկավարժական պայմանների ներդրումը գործնականում կնպաստի դպրոցականների սեռական դաստիարակության գործընթացի արդյունավետության բարձրացմանը:
- Գիտափորձով ստուգված դիդակտիկական մյուսերը և առաջարկվող մոտեցումները կարող են երաշխավորվել և ներդրվել դպրոցներում, բժշկահոգեբանական կենտրոններում, ընտանիքում երեխաների սեռական դաստիարակության, ուսուցիչների մասնագիտական պատրաստության, ինչպես նաև ուսուցիչների վերապատրաստման և որակավորման բարձրացման գործընթացներում:
- Զետազոտության արդյունքում ստեղծված եզրակացությունները կարող են ներդրվել միջին և ավագ դպրոցի դաստիարակության ամբողջական համակարգում, «Սեռական դաստիարակության հիմունքներ» նախասիրական պարամյունքի կրթադաստիարակչական գործընթացում և դրա չափորոշիչների մշակման աշխատանքներում:

***Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները:***

1. Սեռական դաստիարակությունը դաստիարակության ամբողջական համակարգի բաղադրատարր է. այն սերտորեն կապված է դաստիարակության մյուս բաղադրամասերի հետ: Սեռական դաստիարակության համակարգ ստեղծելու, սեռական դաստիարակության խնդիրներ առաջադրելու և դրանք լուծելու համար էական նշանակություն ունի սեռական դաստիարակության հասկացությունների պարզաբանումը, սահմանումն ու համադրումը, դրանց քննական վերլուծությունը:
2. Դեռահասների սեռական դաստիարակության բովանդակությունը հիմնվում է հոգևոր արժեքների, ազգային սովորույթների և պատմա-մշակութային ավանդույթների, այդ ուղղությամբ համամարդկային պատմական հարուստ փորձի և դրա կիրառելիության հնարավորությունների հաշվառման վրա՝ պայմանավորված ժամանակակից հասարակության մեջ դեռահասների սեռադերային սոցիալականացման գործընթացի արդյունավետությունը երաշխավորող սեռական վարքի սոցիալ-հոգեբանական գործոններով:
3. Սեռական մշակույթն անձնային որակ է, սոցիալական ինստիտուտներում իրականացվող սեռական դաստիարակության արդյունք, որի չափանիշներն են համարվում արժեքային կողմնորոշումները, սեռական առողջության պահպանման հիմունքների վերաբերյալ գիտելիքների առկայությունը, բարոյական

վարքագիծը: Անձի սեռական մշակույթն ընդհանուր մշակույթի մասն է, սեռական վարքի միջոցով հաստատման ձև սոցիոմշակութային միջավայրում. այն ուղղված է մարդկային ցեղի շարունակմանը, կենսասոցիալական, հեղոնիստական, բարոյական, գեղագիտական հետաքրքրությունների, իմացական, հաղորդակցական, փոխհատուցողական, ստեղծագործական պահանջմունքների բավարարմանը:

4. Սեռական դաստիարակության արդյունավետությանը նպաստող մանկավարժական պայմանները և մոդելը ընդգրկում է մեթոդների, հմարների և միջոցների համախումբ, որոնք համապատասխանում են սեռական մշակույթի ձևավորման ընդհանուր տրամաբանությանը:
5. Դպրոցականների սեռական դաստիարակությանն ուղղված աշխատանքների կազմակերպումը ընթանում է երեք ուղղությամբ.
  - ծնողների բարոյասեռական և գենդերային լուսավորությանն ուղղված աշխատանքների միջոցով,
  - ուսումնական առարկաների դասավանդման գործընթացում,
  - նախապիրական և արտադասարանական աշխատանքների ընթացքում:

**Դետազոտության բազա** են հանդիսացել Երևան քաղաքի թիվ 61, 72, 157, հանրակրթական դպրոցները:

**Դետազոտության արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունը**

ապահովվում է հետազոտական նյութի տեսական վերլուծությամբ, որի համար կիրառվել են հետազոտության նպատակներին համարժեք համալիր մեթոդներ, կիրառվել են նաև հետազոտության արդյունքների մաթեմատիկական մշակումներ:

**Դետազոտության արդյունքների փորձարկումն ու ներդրումը** կատարվել է հետազոտության արդյունքները ներկայացնող հրապարակումների և գիտական զեկուցումների միջոցով Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի ընդհանուր մանկավարժության ամբիոնում, նաև գիտական համաժողովների և ընթերցումների ընթացքում:

**Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 172 համակարգչային էջ է:

**ԱՏԵՆԱՒՍՈՒԻՅՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Ներածությամբ** մեջ հիմնավորվել է թեմայի ընտրությունը և արդիականությունը, բացահայտվել են հետազոտության գիտական նորույթը և պաշտպանության ներկայացված դրույթները, մեկնաբանվել է հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը, որոշարկվել է հետազոտության օբյեկտը և առարկան, ձևակերպվել է գիտական վարկածը, սահմանվել են հետազոտության նպատակն ու խնդիրները:

**«Դեռահասների սեռական դաստիարակության գիտատեսական հիմունքները»** խորագրով առաջին գլուխը կազմված է երեք ենթագլխից:

**«Դեռահասների սեռական դաստիարակությունը որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր»** առաջին ենթագլխում սեռական դաստիարակության հար-



ցերը դիտարկվում են իրավական, սոցիալական, բարոյահոգեբանական հարցերի համատեքստում: Դեռահասը ձգտում է հաստատվել սոցիալական դաշտում, իմաստավորել իր իրավունքներն ու պարտականությունները: Ձևավորվում է նոր վերաբերմունք շրջապատի, հասակակիցների և մեծահասակների, նաև ուսման և գիտելիքների նկատմամբ: Անցումային շրջանում սեռական զարգացմանը բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները՝ կապը սեռական զարգացման, սեփական մարմնի և հոգեկանի մասին պատկերացումների միջև, զգայական և սեռական պահանջմունքների և սեռական ինքնանույնականացման, սեռական արժեքների անհատական համակարգի ձևավորում, գերսեռականության հակում և այլն: Որոշ սոցիոլոգներ կարծում են, որ դեռահասների սեռական ակտիվության աճն ամենից առաջ սեռական բարոյականության ազատականացման և երիտասարդական յուրահատուկ ենթամշակույթի հետևանք է: Դեռահասը ընտրում է շփման այն միջավայրը, որը համապատասխանում է իր վարքի ոճին և այն ամրապնդում է: Այսօր նկատվում է ժամանակակից դեռահասի սոցիալական դիմանկարի որոշակի խեղաթյուրում: Դա կապված է երեխաների և դեռահասների առողջության նկատմամբ պետության և հասարակության ոչ բավարար ուշադրության, երեխաների վնասակար սովորությունների և սեռական ակտիվության մասին ծնողների ոչ ճիշտ իրազեկվածության, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների «անառողջ» կենսակերպի խորհրդանիշների (ծխախոտ, գարեջուր, համասեռամոլություն և այլն) անվերահսկելի քարոզչության հետ:

Այսպիսով, դիտարկելով սեռերի փոխհարաբերությունների այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են ժողովրդագրական ճգնաժամը՝ կապված արտագաղթի և երեխաների ծնելիության նվազեցման, թմրամոլության և հարբեցողության, և այս կարգի այլ արատավոր երևույթներ, գալիս ենք այն եզրակացության, որ դրանք առաջին հերթին տանում են ազգային գենոֆոնդի քայքայման. այն կասեցնելու համար պետության կողմից վերահսկվող սեռական դաստիարակության, դպրոցական առողջապահության, բժշկական, իրավական և մանկավարժական լուրջ միջամտություն է պահանջվում:

**«Սեռական դաստիարակության հասկացությունները, խնդիրները, ժամանակակից տեսություններն ու դրանց պատմաքննական վերլուծությունը»** երկրորդ ենթագլուխը նվիրված է սեռական դաստիարակության խնդիրների և դրանց վերաբերվող ժամանակակից տեսությունների և պատմագրական իրողությունների քննարկմանը: Ըստ ամենայնի վերլուծվել են «սեքս» (սեռ), «գենդեր», «սեռային զարգացում», «սեռական ցանկախրություն» (սեքսուալություն), «սեռական մշակույթ», «սեռադերային հանրայնացում», «սեռային նույնականացում» և այս կարգի այլ հասկացություններ: Սեռական դաստիարակության հասկացությունների վերլուծությունից ելնելով առանձնացվել են հետևյալ խնդիրները՝ սեռական դաստիարակության քաղաքականության ձևավորում, սեռական դաստիարակության մասնակիցների և նրանց գործառույթների որոշարկում, սեռական դաստիարակության հատուկ գիտելիքների ձեռքբերման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում, սեռական դաստիարակության որակի վերահսկողության սահմանում և կազմակերպում, սեռական դաստիարակության գործընթացում սեռական մշա-

կույթի ձևավորում, սեռական գիտակցության` որպես սեռաբարոյական գիտելիքների համակարգի ձևավորում, անձի սեռադերային հանրայնացում, հակառակ սեռի նկատմամբ բարձր ու վեհ բարոյական վերաբերմունքի ձևավորում, սեռական այլասերվածության, թմրանոլության, հարբեցողության նկատմամբ իմունիտետի ձևավորում և այլն:

Ընդհանրացնելով սեռական դաստիարակության վերաբերյալ մարդկության կուտակած դարավոր փորձը, բացահայտվում է, որ հասարակության տարբեր շերտերում և առանձին մարդկանց հայացքներում եղել են մի քանի հանրահայտ դիրքորոշումներ, որոնց վերլուծությունը, կարծում ենք, կօգնի ինչպես սեռական դաստիարակության ռազմավարության և մարտավարության խնդիրների մշակման գործին, այնպես էլ մարդկանց առանձին խմբերի հնարավորություն կտա ստեղծել սեռականության սեփական փորձի որոշակի համակարգ: Սեռական դաստիարակության ամենատարածված դիրքորոշումներից մեկը **մաքրակրոն** (պուրիտանական) ուղղությունն է: Սեծահասակները` առաջնորդվելով սեռական հարցերի վերաբերյալ սեռական փորձով և մանկավարժական իրենց սահմանափակ գիտելիքներով, երեխաներին սեռական հարցերի վերաբերյալ տեղեկություններ չեն հաղորդում: Նրանք աշխատում են երեխաների հետ երբեք չխոսել սեռական հարցերի մասին, իսկ եթե խոսում են, ապա միայն բացասական տոնայնությամբ: Տարածված մոտեցումներից մեկը **տեսական** ուղղությունն է. այս դեպքում թե՛ ծնողները, թե՛ ուսուցիչները բավարարվում են միայն սեռական հարցերի վերաբերյալ տեսական գիտելիքներ հաղորդելով, որոնք սովորաբար շատ ընդհանուր բնույթ են կրում: Սեռական դաստիարակության հանրահայտ մոտեցումներից մեկը **ընտանեկան** ուղղությունն է: Որոշ ծնողներ և կրոնական կազմակերպություններ կարծում են, որ սեռական դաստիարակությունն ամբողջովին ընտանիքի գործն է, նրան չպետք է խառնվի ո՛չ դպրոցը, ո՛չ էլ հասարակությունը: Այս տեսակետը գոյություն ունենալու իրավունք ունի և զուրկ չէ տրամաբանությունից, քանի որ յուրաքանչյուր ընտանիքում երեխաները բախվում են իրենց ծնողների տեսակետներին և կարծիքներին. արդյունքում որդիների և հայրերի ավանդական հակասությունը հասնում է նվազագույնի: Այսուհանդերձ, սեռական հարցերի մասին ծնողներից ստացած չափից ավելի ծայրահեղական հայացքները կարող են տարբերվել այն ամենից, որ երեխաները տեսնում են հեռուստացույցով, կարդում են գրքերում և անսագրերում: Արդյունքում կարող է անվստահություն առաջանալ ծնողների հանդեպ և բացառել այն ամենը, ինչ քարոզել են նրանք: Արևմուտքում այսօր սեռական դաստիարակության ամենատարածված մոդելներից մեկը **համալիր** ուղղությունն է. այն ենթադրում է ընտանիքի և դպրոցի փոխադարձ համագործակցությունը սեռական դաստիարակության գործում: Այս մոդելն ամենահեռանկարայինն է, քանի որ երեխաները լիարժեք և անհրաժեշտ տեղեկություններ են ստանում, ծանոթանում են նաև տարբեր մարդկանց տեսակետներին, միաժամանակ հնարավորություն ունեն համեմատելու և սեփական դիրքորոշումներ մշակելու: Այս մոդելը տեսական լուրջ պատրաստվածություն է պահանջում ինչպես ծնողներից, այնպես էլ ուսուցիչներից և դաստիարակներից: Այսպիսով, սեռերի միջև փոխհարաբերությունների բարոյական

մակարդակը հնարավոր է բարձրացնել միայն դպրոցի և ընտանիքի համատեղ և տևական, նպատակաուղղված և համակարգված ազդեցությունների ամբողջական միջոցառումների շնորհիվ:

**«Սեռական դաստիարակության հիմնահարցի դրվածքն անտիկ շրջանի փիլիսոփաների և դասական մանկավարժների հայացքներում»** երրորդ ենթագլուխը հիմնականում կրում է պատմամշակութային բնույթ: Անտիկ շրջանից մինչև 20-րդ դարը դիտարկվել և տրամաբանական և համեմատական զուգահեռներ են անցկացվել սեռական դաստիարակության, սեռային կամ գենդերային իրավահավասարության, սեռային տարբերակման և այս կարգի այլ հասկացությունների պատկերացումների և ըմբռնումների միջև: Հնագույն քաղաքակրթությունների պատմությունը որոշ իմաստով նաև տղամարդ-կին հակադրամիասնությունների էվոլյուցիոն զարգացման պատմություն է և համամարդկային միտքն այդ հարցերը մշտապես ունեցել ու պահել է իր ուշադրության կենտրոնում: Հանգամանորեն քննարկվել են Պլատոնի, Արիստոտելի, Ստրաբոնի, Կոռնելիոս Տակիտոսի, Քվինթիլիանոսի, նաև ֆրանսիական հումանիստական մանկավարժության ակադեմիկոսներից հերկայացուցիչներ Ռաբլեի, Ֆենելոնի, գիտական մանկավարժության հիմնադիր Յ.Ա. Կոմենսկու, Ջոն Լոկի, Ժ.ժ.Ռուսոյի և այլոց աշխատություններում տեղ գտած սեռական դաստիարակության հարցերը: Դրանցում կարմիր թելով անցնում է այն գաղափարը, ըստ որի՝ կնոջ կրթությունը հոգեսեռական դաստիարակությանը նպաստող անհրաժեշտ գործոն է: Յ.Ա.Կոմենսկին լինելով բարձրաստիճան հոգևորական հակադրվում է ինչպես անտիկ, այնպես էլ իր ժամանակի մշակավոր մտածողներին, նաև կրոնին և աստվածաշնչին՝ ներկայացնելով այդ շրջանի ամենաառաջադեմ գաղափարներից մեկը՝ դաստիարակության և կրթության հարցում կնոջ և տղամարդու իրավահավասարության գաղափարը: Ջ.Լոկը ծնողներին խորհուրդ է տալիս լինել զգույշ և հետևողական, վերացնել գրգռող ներգործությունները երեխայի էրոզեն (տարփածին) գոտիների վրա, խուսափել նեղ և անհարմար հագուստներից, փափուկ և փետրալից անկողիններից, նաև քաղցրավենիքներից և սուր համեմունքներով կերակրատեսակներից, որոնք բորբոքում են արյունը: Ըստ ամենայնի՝ վերլուծվել են Ժ.ժ. Ռուսոյի, Կ.Դ.Ուշինսկու Պ.Պ.Բլոնսկու Ջ.Ֆրոյդի և այլոց անձի սեռական դաստիարակության և զարգացման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները:

Ա.Ս.Մակարենկոն և Վ.Ա.Սուխոմլինսկին երեխայի համակողմանի զարգացման գործում կարևորելով սեռական դաստիարակության դերն իրենց ստեղծագործություններում տալիս են այդ հարցի ֆիզիոլոգիական, հոգեբանական և մանկավարժական խոր վերլուծությունը:

Սեռական դաստիարակության, դպրոցական առողջապահության, երիտասարդության սեռական առողջության և այլ հարցեր առավել խորությամբ ներկայացվել է նաև հայ, մասնավորապես արևմտահայ դասական մանկավարժների աշխատություններում և հայացքներում: Ատենախոսության մեջ տեղ է գտել 19-րդ դարի արևմտահայ բժիշկ-մանկավարժ Սերովբե Վիչենյանի «Մանկատաժություն» գրքի քննական վերլուծությունը, որտեղ հեղինակը տարբեր կողմերով դիտարկել է երկսեռ դեռահասների սեռական դաստիարակության առանձնահատկությունները:

Ամփոփելով ատենախոսության առաջին գլխում քննարկված հարցերը հանգել ենք հետևյալին՝

- Սեռական դաստիարակությունը պետք է սկսել ընտանիքում՝ վաղ մանկական տարիքում: Եթե այն սկսվում է միայն դեռահասության շրջանում, ապա դա, ըստ էության, ոչ այնքան դաստիարակություն է, որքան վերադաստիարակություն, որը ենթադրում է անիրազեկության և «փողոցի» դաստիարակության հետևանքի դժվար և երկարատև հաղթահարում:
- Դեռահասների սեռականության (ձեռնաշարժություն, սեռական փորձեր, սեռական կողմնորոշման ձևավորման ժամանակավոր թերություններ և այլն) դրսևորման բնական ձևերի նկատմամբ մեծահասակների անհարկի լարվածությունը, նրանց հսկելը, պատժելն ու վախեցնելը կարող են հանգեցնել հոգեսեռական զարգացման լուրջ խանգարումների:
- Որոշ ծնողներ չեն համարձակվում կամ էլ չեն կարողանում դեռահասի հետ քննարկել սեռական վարքի, հակաբեղմնավորման, վեներական հիվանդություններ և այլ հարցեր. արդյունքում բարձիթողի արված հիվանդություններն ու հորմոնալ հակաբեղմնավորիչների օգտագործումը, վաղ հղիություններն ու դրանց ընդհատումն իրենց հետքն են թողնում ինչպես սեռական և մանկածնության գործառույթների, այնպես էլ սերունդների առողջության վրա:
- Սեռաբանական գիտելիքները, մանկածնության գործառույթի լիարժեք ձևավորումը, ապագա կնոջ (ամուսնու) առողջության և երջանկության համար պատասխանատվության գիտակցումը անրապնդում են ամուսնությունն ու ընտանիքը: Ուրեմն՝ սեռական դաստիարակությունը կապված է բժշկամանկավարժական և սոցիալական բարդ խնդիրների հետ, միահյուսվում են ֆիզիոլոգիական-հիգիենիկ, մանկավարժական, բարոյագիտական և գեղագիտական հայեցակարգային մոտեցումները:
- Մեր ուսումնասիրությունների արդյունքում սեռական դաստիարակության մեջ առանձնացվել է միմյանց հետ փոխկապված երկու կողմ՝ սեռական լուսավորություն, որը օգնում է ճիշտ ընկալել սեռերի առանձնահատկություններն ու նրանց փոխհարաբերությունները և գենդերային դաստիարակություն. այն օգնում է սեփական հոգեսեռական անհատականության որոնման և իրագործման նպատակադրմամբ մշակելու սեռական վարքի համարժեք ոճերում և ավելի լայն իմաստով երկու սեռերի փոխհարաբերություններում:
- Արևմուտքի որոշ սեռաբաններ, հոգեբաններ և մանկավարժներ, նկատի ունենալով սեռական հասունացումը, դեռահասության շրջանը համարում են «ճգնաժամային» տարիք: Նրանք հիմնականում առաջնորդվում են Ջ.Ֆրոյդի հակագիտական այն տեսությամբ, ըստ որի սեռական պահանջումները և դրա հետ կապված «լիբիդոն» բախտորոշիչ նշանակություն ունի մարդու կյանքում, սեռական պահանջումների բավարարումը հանդիսանում է մարդկային կյանքի շարժիչ ուժը, ուրեմն՝ լայն ազատություն պետք է տալ սեռական հակումներին:
- Ջ.Ֆրոյդի տեսությունն առաջին հերթին արատավոր է մանկավարժական տեսակետից, քանի որ այն բացարձակապես մերժում է սեռական դաստիարակության ուղղությամբ նախատեսված գրեթե բոլոր միջոցառումները,

«կուլտուրական արգելքները», ծնողների, ուսուցիչների և առհասարակ մեծահասակների վերահսկողությունը և այլ գործոններ:

- Ինչպես անտիկ շրջանի, այնպես էլ միջնադարի և դասական մանկավարժների առաջավոր փորձը ցույց է տալիս, որ սեռական ճիշտ դաստիարակության դեպքում դեռահասների հոգեսեռային զարգացումը տեղի է ունենում հանգիստ, առանց լուրջ բարդությունների և դժվարությունների:

**«Դեռահասների սեռական դաստիարակության մանկավարժական պայմանները»** խորագրով երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

**«Սեռական դաստիարակության առանձնահատկությունները միջին և ավագ դպրոցական տարիքում»** առաջին ենթագլխում մեկնաբանել են դեռահասների հոգեսեռական զարգացման փուլերը, տարիքային պարբերացումը: Սեռական հասունության շրջանը մարդու ընդհանուր հասունության գլխավոր փուլերից է. դա մի գործընթաց է, որը կենսաբանական փոփոխությունների հետ միասին իր մեջ ներառում է նաև հոգեկան, մշակութաբանական փոփոխություններ: Անձի ձևավորման գործընթացում սեռական հասունությունը կենսաբանական և սոցիալ-հոգեբանական բարդ երևույթ է. այն ընդգրկում է ընտանեկան ավանդույթների, սովորույթների, ազգային նկարագրի, տարածաշրջանի, բնակլիմայական պայմանների, կոնկրետ տվյալ պատմական կացութաձևի և այլ գործոններ: Որպեսզի մարդը գիտակցի իր սեռային պատկանելիությունը, յուրացնի և կատարի համապատասխան սեռային գործողություններ, նա պետք է դառնա կամ տղամարդ, կամ կին, քանի որ սեռական նույնականությունն անձին ենթարկում է օտարման իր սեռային պատկանելիությունից, յուրացնում է խորթ հակումներ, վարքի նորմեր, ոճեր, հոգեսեռական յուրահատուկ կողմնորոշվածություն հակառակ սեռի նկատմամբ և այլն: Միջին դպրոցական տարիքից սկսվում է սեռական հասունության առավել ակտիվ փուլը. այն սեռական հասունության և սեռական դաստիարակության նոր շրջանն է՝ ավագ դպրոցական տարիքը: Գիտական հետազոտությունները բերում են այն համոզման, որ յուրաքանչյուր տասնամյակ (նույնիսկ հնգամյակ) նոր փոփոխություններ, անցումային նոր երևույթներ է ի հայտ բերում՝ կապված գիտատեխնիկական առաջընթացի, ուրբանիզացիայի, արքսելերացիայի, հասարակության կենսամակարդակի և այլ գործոնների հետ: Կյանքի ազատականացումն իր հետ բերում է նաև սեռական դաստիարակության նկատմամբ ավանդական մոտեցումների վերանայում և նոր պատկերացումներ: Սեռական դաստիարակության վերաբերյալ ժամանակակից գիտության մեջ կա երկու տեսակետ. առաջին, սերը չի կարելի նույնացնել կամ հավասարեցնել սեքսին, քանի որ այն մարդու զգացմունքների և ապրումների հանրագումարն է: Մյուս տեսակետն այն է, որ մարդկային բոլոր զգայական պատկերացումները, ձգտումները, ցանկությունները ծագում են մեկ ընդհանուր աղբյուրից՝ լիբիդոյից: Այդպես է բնորոշում Զ.Ֆրոյդն իր «Ձանգվածային հոգեբանություն և «ես»-ի վերլուծություն» գրքում: Ժամանակակից մոտեցումները մի կողմից քննադատում են ֆրոյդիստական զնահատումները, մյուս կողմից սահմանում են, որ մարդու մեջ կան որոշակի սեռական պահանջմունքներ, որոնք միանշանակ չեն կարող ներկայացնել և իրենց բավարարումը մեկ եղանակով ստանալ: Յուրաքանչյուր անհատ

ուևի որոշակի բնատուր սեռական պահանջումներ, կարողություններ, սեռական վարք, որոնք կարող են ներկայանալ որպես կոնկրետ պայմանների և նրա անձի ձևավորման հանրագումար: Անձի զարգացման գործընթացում կան վարքի կարգավորման, վերահսկման և կառավարման տարբեր մակարդակներ և որակներ: Այսպիսով՝ սեռական դաստիարակության վերաբերյալ մեր ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս եզրակացնել, որ սեռական հասունության, նրա բնականոն զարգացման և պատշաճ գնահատման համար անհրաժեշտ է սեռական զարգացումը դիտարկել տարբերակված՝ տղաների և աղջիկների նույն դասարանցի լինելը չհամարել նույնական, քանի որ նրանց սեռական զարգացման գործընթացը դեռահասության փուլում ընդհուպ 2-3 տարվա տարբերություն ունի: Այդ փուլը գրականության մեջ հայտնի է պլուբերտացիայի նախնական, բուն և ավարտուն շրջան անվանումով. այն սկսվում է դպրոցական, աշակերտական ուսումնառության շրջանում և ավարտվում է դրանով:

**«Դեռահասների սեռական դաստիարակության միջոցներն ու մեթոդները հանրակրթական դպրոցում»** երկրորդ ենթագլխում հանգամանորեն դիտարկվել են հանրակրթական դպրոցում սեռական դաստիարակության միջոցներն ու մեթոդները, ներկայացվել են դրանց կազմակերպման, իրականացման փաստացի նկարագրումներ: Սեռական դաստիարակության մոդելի առանցքը դպրոցականների դաստիարակության առանձնահատուկ մեթոդների և մոտեցումների անհրաժեշտության գաղափարի հիմնավորումն է: Դաստիարակության մեթոդների ընտրության խնդիրը մանկավարժության ամենաբարդ խնդիրներից մեկն է: Իրենց աշխատություններում այդ հարցերն են արծարծել Լ.Ի.Բոլդիրևը, Ն.Կ.Գոնչարովը, Ֆ.Ֆ.Կորոլյովը, Ս.Ա.Իլյինան, Ի.Ս.Մարիներևկոն, Ի.Տ.Օգորոդնիկովը և ուրիշներ: Մանկավարժության գործընթացի իրական պայմաններում մեթոդները հանդես են գալիս միասնաբար: Մենք տարբերակել ենք սեռական դաստիարակության նկատմամբ **համակարգային-կառուցվածքային, համալիր և գործունային** մոտեցումները: Սեռական դաստիարակության համակարգային-կառուցվածքային մոտեցման էությունը ներկայացվել է երեք հիմնական դիրքորոշումների տեսանկյունից.

- սեռական դաստիարակությունը դիտարկել ենք որպես մանկավարժական ամբողջական գործընթացի բաղկացուցիչ մաս,
- սեռական դաստիարակությունը դիտարկել ենք որպես մանկավարժական ամբողջական համակարգ,
- սեռադերային հանրայնացման ենթարկվող անհատը մեր կողմից դիտարկվել է որպես համակարգային գոյացություն, որի կառուցվածքային բաղադրիչները ներկայացված են անհատականության ինտեգրալ ուսումնասիրության տեսանկյունից:

Սեռական դաստիարակության **համալիր** մոտեցման էությունը արտահայտվում է դեռահասների դաստիարակության բոլոր կողմերի փոխկապվածությամբ: Այդ կապը նպատակ ունի երեխաների մեջ ձևավորել համապատասխան վարք, գիտակցություն և հմտություններ, ձևավորում է որոշակի վերաբերմունք վարքի ոճի նկատմամբ (կազմվածք, քայլվածք, շարժումների դինամիկա և այլն): Սե-

ռական դաստիարակության նկատմամբ **գործունային** մոտեցման էությունն այն է, որ որոշարկվի համատեղ գործունեության տեղն ու դերը անձի հոգեսեռային զարգացման գործում: Անձի կայացումն ու նրա սեռադերային սոցիալականացումն իրականացվում է շրջապատի մարդկանց հետ շփման միջոցով: Այդ ընթացքում երեխան տեղեկություններ է ստանում ընտանիքի մասին իրեն շրջապատող այլ մարդկանցից: Սեռական դաստիարակության գործում կարևորել ենք գենդերային մոտեցումը: Անձի ճիշտ ձևավորման համար անհրաժեշտ է ամեն կերպ ամրապնդել սեռական զարգացման այս տարրը, նպաստել, որպեսզի այն ունենա սոցիալապես արժեքավոր բովանդակություն, յուրաքանչյուր երեխայի մեջ կերպավորել պատկերացումներ իսկական տղամարդու և կնոջ մասին, այդ պատկերացումներին համապատասխանելու մղում սերմանել: Դպրոցում սեռական դաստիարակության իրականացման ցանկացած փուլում կարող են կիրառվել ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի մեթոդներ՝ դասախոսություններ, բանավեճեր, զրույցներ, «սարդոստայն», մարզում, անհատական խորհրդատվություն, դերային խաղեր, մտագրոհ, մեդիտացիա և այլն: Ինչպես անհատական, այնպես էլ խմբային մեթոդներն ուղղված են անձի զարգացման խնդիրների լուծմանը: Դրական է այն հանգամանքը, որ մասնակցությունը խմբի աշխատանքին դրդում է դեռահասին անհատապես շփվելու ուսուցչի հետ, նպաստում է նրանց միջև վստահելի փոխհարաբերությունների ձևավորմանը: Հոգեբանական առումով այլ մարդկանց հետ փոխազդեցությունը նպաստում է անձի ինքնաիրացմանը:

Սեռական դաստիարակության մեթոդներն ու մոտեցումները նպաստում են սեռերի փոխհարաբերությունների ոլորտում բարոյական նորմերի և նպատակադրումների էության ճիշտ ըմբռնման և շփման ժամանակ նրանց հետևելու անհրաժեշտության ձևավորմանը, որն էլ ապահովում է հասարակության հոգևոր և ֆիզիկական առողջության բարձր մակարդակը:

Ատենախոսության **«Սեռական դաստիարակության մոդելի արդյունավետության փորձարարական ստուգման արդյունքները»** երրորդ ենթագլխում ներկայացված են հետազոտության արդյունքների ստացման քանակական տվյալները: 2006-2008 ուսումնական տարիներին փորձարարական դասարաններում գրականության և կենսաբանության նախասիրական պարապմունքները անցկացվել են մեր կազմած «Սեռական դաստիարակության հիմունքներ» ծրագրով: Ստուգողական դասարանում աշակերտների ուսուցումը կատարվում է նույն ուսումնական ծրագրի շրջանակներում: Գիտափորձի հիմնական նպատակներն են.

- վարկածի գործնական կարևորության ստուգում, ըստ որի գենդերային մոտեցումը դեռահասի սեռական դաստիարակության հիմքն է,
- կենսասոցիալական տեսանկյունից տալ բնության մեջ մարդու տեղի և դերի սահմանումը,
- կենսաբանական առարկաները դիտարկել որպես սովորողների սեռական դաստիարակության տեսական հիմք, որի առաջնահերթ խնդիրը նրանց կողմից գենդերային հիմնախնդիրների և սեռական մշակույթի գիտակցումը և

աղջիկների սեռական լուսավորությունն է,

- կենսաբանության ուսուցման ընթացքում սեռական դաստիարակության մոդելի գործնական իրականացման արդյունավետության աստիճանի որոշարկելը:

Հետազոտության մեջ ընդգրկվել է մայրաքաղաքի տարբեր դպրոցների 250 մասնակից: Երկու տարի շարունակ փորձարարական խմբի մասնակիցները հաճախել են «Սեռական դաստիարակության հիմունքներ» նախասիրական պարապմունքներին: Պետք է նշել, որ սեռական փոխհարաբերությունների մշակույթի ձևավորվածության աստիճանը դժվար է տալ հենց այդ հասկացության մեթոդաբանական ապարատի թուլության պատճառով, քանի որ այն դեռ նոր է ձևավորվում: Այդուհանդերձ, օգտվելով մշակույթի այլ տեսակների ձևավորվածության գնահատականի նկատմամբ ժամանակակից գիտության մեջ եղած մոտեցումներից, կարելի է առաջարկել դրա գնահատման սեփական տարբերակը: Առանձնացրել ենք սեռական մշակույթի երեք կարևոր չափանիշ՝

- արժեքային համակարգ, որի շնորհիվ իրականացվում է դեռահասի սեռադերային հանրայնացումը,
- պատրաստվածությունը պատասխանատու ամուսնությանը,
- սեռական առողջության պահպանման հիմունքների իմացությունը:

Ըստ դրա առանձնացրել ենք սեռական մշակույթի ձևավորվածության երեք մակարդակ՝ ցածր, միջին, բարձր:

Սեռական մշակույթի ձևավորվածության մակարդակի բացահայտման համար կիրառել ենք Ս.Ա.Բուդասի մեթոդով թեստավորումը, Վ.Շուտցի միջանձնային հարաբերությունների վերաբերյալ հարցաթերթիկը, մաև հանձնարարվել է շարադրություն «Կնոջ և տղամարդու դերը ընտանիքում», «Սերը որպես բարձրագույն զգացում» և այլն: Ելակետային անկետավորման տվյալները, որը մեր կողմից անցկացվել է 2006-ին 8-րդ դասարանի աշակերտների մոտ ներկայացված են աղյուսակ 1-ում:

### Աղյուսակ 1

#### **Դեռահասների՝ սեռական մշակույթի մասին ունեցած գիտելիքների ելակետային հետազոտության արդյունքներ (2006թ., %-ներով)**

Դեռահասների սեռական մշակույթի ձևավորվածության չափանիշներ	Փորձարարական խումբ (125 մասնակից)			Ստուգողական խումբ (125 մասնակից)		
	ցածր	միջին	բարձր	ցածր	միջին	բարձր
Սեռական մշակույթի ձևավորվածության մակարդակներ						
Արժեքային կողմնորոշումներ, որոնք որոշում են սեռադերային սոցիալականացումը	46	46	8	45	43	12
Պատրաստվածությունը պատասխանատու ամուսնության	42	48	10	43	48	9
Սեռական առողջության պահպանման հիմունքների իմացություն	51	40	9	54	36	10
Միջին թվաբանական ցուցանիշը	46,3	44,7	9	47,3	42,3	10,3



Ինչպես երևում է ստացված ցուցանիշներից, ստուգողական և փորձարարական խմբերում հետազոտության արդյունքները գրեթե նույնն են: Փորձարարական խմբում հետազոտվածների 46,3 %-ը, ստուգողական խմբում՝ 47,3 %-ը սեռական մշակույթի ցածր մակարդակ ունեն, որը թեստի չափանիշներով նշանակում է, որ այդ դեռահասները ինքնամփոփ են, գերադասում են մեմակությունը, նրանք իրենց մասին ունեն ուռճացված կամ ցածր ինքնագնահատական, դժգոհ են իրենցից, ընտանիքում իրենց համարում են ավելորդ, կոնֆլիկտներ ունեն ծնողների հետ և այլն: Հաղորդակցության բարձր մակարդակ փորձարարական խմբում ունեն սովորողների 9%-ը, ստուգողականում՝ 10,3 %-ը: Նրանք մարդանոտ են, զրուցասեր, սիրում են լինել ուշադրության կենտրոնում, հաճույքով շփվում են միմյանց հետ, ունեն համապատասխան ինքնագնահատական: Սովորաբար նրանք ամբողջական ընտանիքի երեխաներ են, որտեղ ծնողները ընկերություն են անում իրենց երեխաների հետ: Փորձարարական աշխատանքի եզրափակիչ փուլում կրկին ստուգում անցկացվեց ի հայտ բերելու դեռահասների սեռական մշակույթի ձևավորվածության մակարդակի փոփոխությունները: Ստացված նոր տվյալների արդյունքները տե՛ս աղյուսակ 2-ում:

## *Սղյուսակ 2*

### ***Դեռահասների՝ սեռական մշակույթի մասին ունեցած գիտելիքների վերջնական հետազոտության արդյունքներ (2008թ., %-ներով)***

Դեռահասների սեռական մշակույթի ձևավորվածության չափանիշներ	Փորձարարական խումբ (125 մասնակից)			Ստուգողական խումբ (125 մասնակից)		
	ցածր	միջին	բարձր	ցածր	միջին	բարձր
Սեռական մշակույթի ձևավորվածության մակարդակներ						
Արժեքային կողմնորոշումներ, որոնք որոշում են սեռադերային սոցիալականացումը	23	40	37	39	42	19
Պատրաստվածությունը պատասխանատու մոսնություն	17	42	41	29	54	17
Սեռական առողջության պահպանման հիմունքների իմացություն	22	34	44	31	48	21
Միջին թվաբանական ցուցանիշը	20,6	38,7	40,7	33	48	19

Ստացված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձարարական խմբի դեռահասների հայացքներում և դատողություններում կատարվել են նշանակալի փոփոխություններ, մինչդեռ ստուգողական խմբում փոփոխություններն աննշան են: Վերջնական արժեքային համար օգտագործել ենք՝ պոստեմպիրիկ ռոմանտիկ ընկերոջը գնահատելու չափանիշների որոշման հարցաթերթը, «Արժեքային կողմնորոշում» մեթոդիկան (Մ.Ռոկիչ): Սովորողներին առաջարկվեց գրել շարադրություն «Նամակ սիրած մարդուն», «Ամուսնությանը հոգեբանորեն պատրաստ լինելու հիմնական բաղադրիչները» և այլն: Վերլուծվեցին եզրա-

փակիչ սեմինարի արդյունքները, որի շրջանակներում անցկացվեց «Հայացք ապագայից» ինքնահայեցությունը (մեդիտացիան): Փորձարարական աշխատանքի կազմակերպումը թույլ տվեց բացահայտել դեռահասների մեջ սեռական մշակույթի ձևավորվածության աստիճանը և նախագծել զարգացման հետևյալ դինամիկան (տե՛ս աղյուսակ 3-ը):

**Աղյուսակ 3**

**Սեռական մշակույթի ձևավորման դինամիկան**

Մակարդակներ	Փորձարարական խումբը փորձը սկսելուց առաջ և հետո		Ստուգողական խումբը փորձը սկսելուց առաջ և հետո	
	Բարձր	9	40,7	10,3
Միջին	44,7	38,7	42,3	48
Ցածր	46,3	20,6	47,3	33

Այսպիսով, մեր կողմից կատարված փորձարարական աշխատանքի արդյունքում հաստատվեց, որ ժամանակակից դպրոցում «Կենսաբանություն» առարկայի «Մարդ» բաժնի դասավանդման ընթացքում բավարար ուշադրություն չի դարձվում դեռահասների սեռական դաստիարակությանը: Մեր կարծիքով «Սեռական դաստիարակության հիմունքներ» նախասիրական պարապմունքի ներդրումը նպաստում է դեռահասների սեռադերային սոցիալականացման և սեռական լուսավորության ոլորտում եղած բացերի վերացմանը: Բացի դրանից նախասիրական պարապմունքի ծրագիրը համագործածական բնույթ ունի և մարդու զենդեբային և ֆիզիոլոգիական զարգացման տեսական վերլուծությունն է. այն ենթադրում է դեռահասների սեռադերային հանրայնացման ակտիվ ձևերի կիրառություն և դասախոսություններ սեռական հարաբերությունների ոլորտում նրանց լուսավորելու համար:

Հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա արվել են հետևյալ եզրակացությունները.

1. Սեռական դաստիարակությունը նպատակաուղղված, ամբողջական գործընթաց է. այն ուղղված է հասարակության մեջ սեռային դերերի հանրայնացմանը, հասարակական ու անձնական կյանքում սեռերի միջև ճիշտ փոխհարաբերությունների հաստատմանը, սեռական լուսավորության միջոցով անձի նախապատրաստմանը սեռական կյանքին:
2. Սեռական դաստիարակության վերաբերյալ մանկավարժահոգեբանական ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ սեռական հասունության, նրա բնականոն զարգացման և ճիշտ գնահատման համար անհրաժեշտ է սեռական զարգացման գործընթացը դիտարկել տարբերակված եղանակով, քանի որ սեռական զարգացման գործընթացը դեռահասության փուլում ընդհուպ 2-3 տարվա տարբերություն է ունենում: Այդ փուլը գրականության մեջ հայտնի է պաբերտացիայի նախնական, բուն և ավարտուն շրջան անունով:
3. Սեռական դաստիարակությունը դաստիարակության ամբողջական համա-

կարգի բաղադրատարր է, անձի սոցիալականացման կարևոր հատկանիշ. այն մարդու հասարակական և միջանձնային հարաբերություններում ներքին կարգավորիչի դեր է կատարում, նպաստում է անձի ներդաշնակ կեցությանը, սեռական դաստիարակության արդյունավետ իրականացմանը:

4. Մեր հետազոտության առանցքը կազմում է միջին և ավագ դպրոցականների սեռական դաստիարակության կազմակերպման և մանկավարժական արդյունավետության ապահովման առանձնահատկությունների բացահայտումը: Այդ գործընթացը հիմնականում պայմանավորված է դեռահաս դպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկություններով: Միջին դպրոցական տարիքից սկսվում է սեռական հասունության առավել կենսունակ փուլը, որը կանխորոշում է սեռական հասունացման և սեռական դաստիարակության նոր փուլը՝ ավագ դպրոցական տարիքը: Դեռահասության տարիքը բնութագրվում է ապագայի նպատակամղվածությամբ, որը կանխագծում է դպրոցականի հոգևոր աշխարհի զարգացման ու վարքային դրսևորումները: Այդ տարիքում են ձևավորվում անձի ինքնորոշման, ինքնաիրացման պահանջումները, զարգանում և ընդլայնվում է նրա մտահորիզոնը, հստակեցվում են նրա համոզումները, ձևավորվում են ինքնագնահատման դրդապատճառները:
  5. Մեր կողմից կատարված վերլուծության արդյունքում հաստատվեց, որ ժամանակակից դպրոցում դաստիարակչական աշխատանքի և «Կենսաբանություն» առարկայի «Մարդ» բաժնի, ինչպես նաև հասարակագիտական առարկաների դասավանդման ընթացքում բավարար ուշադրություն չի դարձվում սեռական դաստիարակությանը: Կենսաբանական դպրոցական կրթության ծրագրային ապահովման վերլուծությունը ցույց է տալիս, որ իրագործման ենթակա խնդիրների որչ լիարժեքությամբ հանդերձ՝ այնտեղ իր արժանի տեղը չունի այն հայեցակետը, որն անմիջականորեն կապված է հենց իր՝ մարդու և նրա սեռական դաստիարակության ներկայումս շատ արդիական հիմնախնդրի հետ: Փոփոխությունների կարիք ունեն ուսումնական ծրագրերն ու ձեռնարկները, որոնք կենսաբանության դպրոցական դասընթացի հիմքն են: Բացի դրանից դասողները պետք է խնամքով ընտրեն այս հիմնախնդրի վերաբերյալ դասարանական ժամերի և զրույցների նյութը:
  6. Փորձարարական աշխատանքի արդյունքները ցույց տվեցին, որ դեռահաս աղջիկները, որոնք մասնակցել են նախափրական պարապմունքի, տարբերվում են կաշկանդվածության բացակայությամբ, տղաների հետ վիճելու և իրենց համոզումները պաշտպանելու ունակությամբ: Այսինքն՝ դերային խաղերը, որոնք կազմակերպվել են պարապմունքների ժամանակ, նպաստել են այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնց դեպքում դեռահասների մեջ ձևավորվել է ինքնաարտահայտման և ինքնաիրագործման ունակություն, շրջապատող մարդկանց հետ փոխազդեցությամբ բավարարվածության զգացում:
- Գիտափորձից հետո հետազոտվող դեռահաս տղաների մեծ մասը հստակ պատասխաններ տվեցին, թե իրենք որ տարիքում պետք է ամուսնանան և որում երեխա ունենան: Նրանք համոզված են, որ նպատակահարմար է, որ տղան աղջկանից մի քանի տարի մեծ լինի, ավելի փորձառու, կյանքի տարբեր իրավիճակներում թրծված, ինքնահաստատված, սոցիալապես ինքնուրույն, կայուն:

7. «Սեռական դաստիարակության հիմունքներ» նախասիրական պարապմունքի ներդրումը նպաստեց դեռահասների սեռադերային հանրայնացմանը և սեռական լուսավորությանը: Եթե փորձարարական խմբում մինչ մշակված ծրագրի ներդրումը բարձր մակարդակ ունեին դեռահասների 9% -ը, ապա փորձի վերջում այդ թիվը հասավ 40,7% -ի: Միջին մակարդակը, ընդհակառակը, կրճատվեց. եթե փորձի սկզբում այն կազմում էր 44,7%, ապա վերջում դարձավ 38,7% : Մեծ փոփոխություններ դիտվեցին նաև ցածր մակարդակ ունեցող դեռահասների շրջանում: Նրանց թվաքանակը համապատասխանաբար նվազեց՝ 46,3% -ից դառնալով 20,6%: Գիտափորձից հետո դեռահասների մեծ մասը նախընտրում է նշված հարցերի մասին տեղեկատվություն ստանալ ծնողներից, ուսուցիչներից, ծնողների միջնորդությամբ նաև բժիշկներից: Նրանք փորձից հետո էլ չեն թերագնահատում մասնագիտական գրականության, հեռուստատեսության, հեռուստահաղորդումների, ինտերնետի լայն հնարավորությունները, մատչելիությունը: Կարևորեցին նաև համապատասխան դասընթացների դերը: Դեռահասների հիմնական մասը ծանոթ էր տեղեկատվության աղբյուրներին: Փորձից հետո հարցման ենթարկված դեռահասների մեծամասնության կարծիքով սեռական կյանքը կարելի է սկսել սեռական հասունացումից հետո, չափահաս, ավելի գիտակցական տարիքում, փոխադարձ զգացմունքի արդյունքում, և կարծում էին, որ ճիշտ է այն սկսել ամուսնալուց հետո:
8. Փորձարարական հետազոտության արդյունքներն ապացուցում են, որ սեռական դաստիարակության արդյունավետ իրականացումը մի կողմից նպաստում է սեռագիտակցության և համարժեք վարքի ձևավորման գործընթացին, օգնում սեռաբանական գիտելիքների յուրացման աշխատանքներին, իսկ մյուս կողմից՝ ապահովում է համամարդկային բարոյական սկզբունքներով առաջնորդվելու և սեռական մշակույթի ձևավորմանը, որը անձի ընդհանուր մշակույթի անհրաժեշտ բաղադրատարրն է. այն կոնկրետ մշակույթից դուրս գոյություն չունի: Սեռական մշակույթը գիտելիքների, կարողությունների և հմտությունների այն հանրագումարն է, որն անձին հնարավորություն է տալիս հաջողությամբ և անվտանգ հասնելու իր սեռական նպատակներին: Սեռական մշակույթը սոցիալ-մշակութային միջավայրում սեռական վարքի միջոցով հաստատման ձև է. այն ուղղված է մարդկային ցեղի շարունակմանը, կենսասոցիալական, հեղոնիսական, բարոյական, գեղագիտական հետաքրքրությունների, իմացական հաղորդակցական, փոխհատուցողական, ստեղծագործական պահանջմունքների բավարարմանը:
9. Դեռահասների սեռական դաստիարակության մեր կողմից մշակված մոդելը ներառում է ծնողների սեռական և մանկավարժական լուսավորությունը, 8-9-րդ դասարաններ «Կենսաբանություն» դասընթացը և «Սեռական դաստիարակության հիմունքներ» ծրագիրը, որը ենթադրում է սեռական կյանքի, հարաբերությունների և առողջ ապրելակերպի վերաբերյալ պատկերացումները: Դպրոցներում սեռական դաստիարակության կազմակերպման յուրաքանչյուր փուլում կարող են կիրառվել ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի մեթոդներ, որոնք ընտրվում են՝ պայմանավորված մանկավարժական իրադրությանմբ և առաջադրված խնդիրներով՝ դասախոսություններ, քննարկումներ, բանավեճեր, զրույցներ, մարզումներ, անհատական խորհրդատվություն, դերային խաղեր, մտագրոհ,

ինքնահայեցության հնար և այլն:

10. Սեռական դաստիարակությունը նպատակաուղղված է սեռական մշակույթի ձևավորմանը. այն անձի ընդհանուր մշակույթի բաղկացուցիչն է, հիմնվում է ազգային ու համամարդկային հոգևոր արժեքների, ազգային ավանդույթ-սովորույթների և սոցիալական փորձի վրա: Առանց սեռական դաստիարակության մարդկության կուտակած փորձը յուրացնելն անհնար է, քանի որ պատասխանատու և անվտանգ սեքսը գիտելիք է պահանջում: Պատահական չէ, որ սեռական ոլորտին վերաբերող գիտական տեղեկությունները և կրթության մատչելիությունը դասվում է մարդու սեռական առողջության և իրավունքների կարևորագույն խնդիրների շարքում. այն պահանջում է պետություն-ընտանիք-դպրոց-հասարակություն կարևոր օղակների միասնական նպատակաուղղված և հետևողական համագործակցություն:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Սեռական դաստիարակության ավանդական և արդիական ըմբռնումների մասին, «Մանկավարժական միտք», Տաթև գիտակրթական համալիր, N.4, 2005թ., էջ 44-49:
2. Սեռական դաստիարակության առանձնահատկությունները միջին և ավագ դպրոցական տարիքում, «Գարուն» ամսագիր, N.3-2005, էջ 60-63
3. Քարոզչության մեթոդների ընտրության դերը դեռահասների դաստիարակության գործում, «Առողջապահություն» հանդես,4, 2005թ., էջ 14-15:
4. Սեռական դաստիարակությունն անձի ձևավորման և զարգացման գործում, «Առողջապահություն» հանդես, N 2, 2005թ., էջ 13-14:
5. Вопросы полового воспитания подростков, ВЕСТНИК МАНЭБ, САНКТ-ПЕТЕРБУРГ, 2007, том 12, №4, вып. 2, с. 222-224
6. Половое воспитание – как составная часть развития личности, ВЕСТНИК МАНЭБ, САНКТ-ПЕТЕРБУРГ, 2009, том 14, №4, вып. 1, с. 30-33 (соавтор А.М.Григорян).
7. Դեռահասների սեռական դաստիարակությունը որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր, Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Նոր ուսուցիչ նոր դպրոցի համար (2012 թ., դեկտեմբերի 14), Երևան, Մանկավարժ 2012, էջ 343-346:
8. Դեռահասների սեռական դաստիարակության միջոցներն ու մեթոդները հանրակրթական դպրոցում, «Մանկավարժական միտք» «Ձանգակ» հրատ., Ե., 2013, (1-2) էջ 58-62

## КАРАПЕТЯН КАРИНЕ ГЕВОРГОВНА

### ОСОБЕННОСТИ ПОЛОВОЗРАСТНЫХ ПЕРЕХОДНЫХ ПЕРИОДОВ И СОВРЕМЕННЫЕ ЗАДАЧИ ВОСПИТАНИЯ ШКОЛЬНИКОВ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01- “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 26.09.13. в 14:00 на заседании специализированного совета 020 ВАК “Педагогика” по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 00110 г. Ереван. ул. Тигран Меца 17.

#### РЕЗЮМЕ

##### Актуальность исследования.

Наши исследования показали, что существуют серьезные нерешенные проблемы в сфере полового воспитания в современных армянских школах. В то же время существуют следующие противоречия между:

- Быстро меняющимся требованиями общества и стихийным характером полового воспитания студентов,
- Содержанием формирования половой культуры учащихся средних школ
- Необходимостью разработки альтернативных методов и, одновременно, преодолением последствий их слабого развития в теории и практике педагогики.

Наша исследовательская концепция базируется на необходимости обеспечения гарантий и средств для создания педагогически эффективных условий преодоления вышеупомянутых противоречий в половом воспитании в общеобразовательных школах. Тема исследования обусловлена необходимостью выявления указанных противоречий и выбора надлежащего пути и средств их преодоления. Это также обуславливает актуальность исследования.

Целью исследования является теоретическое и практическое обоснование особенностей половозрастных переходных этапов школьников и современных задач полового воспитания, а также обеспечение эффективных педагогических условий организации процесса полового воспитания.

##### Научная новизна исследования.

- Выявлены и определены понятия полового желания, половой культуры, полового уравнения, половой дифференциации, полового развития, полового здоровья, половых ролей, полового права и т.д.
- Определены цель полового воспитания (в узком и широком смысле), функции, средства и методы полового воспитания, конкретизированы функции в государственных общеобразовательных школах, определены морально-познавательные мотивы и ценностные компоненты полового воспитания, сущность и содержание полового воспитания в современных условиях образовательных реформ.
- Выявлена, изучена и проанализирована проблема полового воспитания в трудах античных философов и педагогов классического периода, существующий богатый

исторический опыт в этой сфере и его применимость в условиях развития среднего образования и реформ в области полового воспитания.

- Разработана педагогическая модель полового воспитания в средней и старшей школе, пересмотрены и теоретически обоснованы место и роль полового воспитания и его взаимосвязи с другими компонентами комплексной системы образования,
- Теоретически обоснованы и экспериментально подтверждены педагогические условия эффективного осуществления полового воспитания в средних и высших школах, которые могут быть реализованы в учебно-воспитательном процессе предлагаемого нами предмета "Основы полового воспитания", а также в разработке стандартов для вышеупомянутого предмета.

#### **Теоретическая значимость исследования.**

- Конкретизированы концептуальные вопросы полового воспитания учащихся средней и старшей школ. Таким образом, настоящее исследование является вкладом в обоснование теории полового воспитания,
- уточнены и конкретизированы содержание и сущность полового воспитания, половых и возрастных особенностей переходных фаз и теоретическая значимость полового воспитания в общей системе образования,
- Результаты исследования включают теоретические положения и подходы, которые расширяют круг знания и понимания школьного полового образования, выявляют педагогические условия его организации в школьном учебно-образовательном процессе.

#### **Практическая значимость исследования.**

- Реализация предложенной модели полового образования и соответствующих педагогических условий позволит повысить эффективность процесса полового воспитания учащихся,
- Учебные материалы и предлагаемые подходы проверенные экспериментально гарантированы и могут быть применены в школах, лечебно-психологических центрах, в процессе полового воспитания детей в семье и повышения квалификации педагогов,
- Выводы результатов исследования могут быть реализованы в системе среднего и старшего школьного образования, в учебно-воспитательном процессе предлагаемого нами предмета "Основы полового воспитания", а также в разработке стандартов для данного предмета.

**Надежность и достоверность результатов исследования** обеспечивается теоретическим анализом исследовательского материала. Для этого были использованы комплексные методы, соответствующие исследовательским целям. Была проведена также математическая обработка результатов исследования.

#### **К защите представлены следующие положения.**

1. Половое воспитание является составной частью целостной системы. Оно тесно связано с другими компонентами образования. Для того, чтобы создать систему полового воспитания, установления задач полового воспитания и их решения важно уточнить, определить и объединить понятия полового воспитания, анализировать их критически.
2. Содержание полового воспитания подростков основано на духовных ценностях, национальных, исторических и культурных традициях, а также на богатом

историческом опыте и возможностях его применения в связи с социально-психологическими факторами полового поведения, обеспечивающих эффективность процесса полового социализации подростков в современном обществе.

3. Половая культура является личным качеством, результатом полового воспитания в социальных институтах. Ее показателями являются ценностные ориентации, знания основ полового здоровья, охраны знаний, нравственное поведение.

Половая культура человека является частью общей культуры, способ обоснования в социально-культурной среде путем полового поведения. Она направлена на продолжение человеческого рода, удовлетворение био-социальных, гедонистических, нравственных, эстетических интересов, познавательных, коммуникативных, компенсационных и творческих потребностей.

4. Педагогическая модель и условия, способствующие повышению эффективности полового воспитания включают методы, навыки и приемы, соответствующие общей логике развития половой культуры.

5. Работа по половому воспитанию школьников ведется по 3 направлениям:

- В рамках мероприятий по морально-половому и гендерному просвещению родителей,
- В процессе преподавания учебных предметов,
- Во время предпочтительных и внеклассных мероприятий.

По полученным результатам опубликовано 8 научных статей.

## **KARAPETYAN KARINE GEVORG**

### **SEX AND AGE TRANSITION FEATURES AND CONTEMPORARY ISSUES OF SCHOOLCHILDREN'S EDUCATION**

Thesis for degree of candidate of pedagogical sciences 13.00.01- "Methods of teaching and education" (The English language).

The defence of the thesis will be held on 26.09.2013, at 14:00 p.m, at the session of the Special Board HAC (Higher Attestation Commission) RA 020 "Pedagogy" at Kh.Abovyan Armenian State Pedagogical University

address:- 0010, Tigran Mets str. 17, Yerevan.

#### **SUMMARY**

##### **Relevance of the research**

Our findings showed that there are serious problems in the sphere of sex education in contemporary Armenian schools that seek to be solved immediately. At the same time there are the following contradictions between:

- a / fast-changing demands of society and the spontaneous character of the students' sex education,
- b / content of shaping secondary school students' sexual education, the need to develop alternative methods and, meanwhile, the overcoming of the lack of their development in theory and practice of pedagogy.

Our research concept is based on providing necessary guarantees and mediums for creating pedagogically efficient conditions to overcome the aforementioned contradictions in sex education in public schools. The choice of this topic is motivated by the necessity of



revealing the mentioned contradictions and choosing proper ways and mediums of their overcoming. This actually presents the relevance of the research.

**The aim of the research** is theoretical and practical basis of the features of schoolchildren's sex and age transitional stages and modern problems of sex education, as well as ensuring efficient pedagogical conditions for organizing the sex education process.

**Scientific novelty of the research:**

**For the first time** the concepts of sexual sensuality, sexual culture, sexual equation, sexual differentiation, sexual development, sex roles, sexual health, sexual rights, and other keywords have been presented in the systematized manner.

- The aim of sex education (in narrow and broad senses) was defined, the features, tools and methods of sexual education were defined features in public secondary and high schools were concretized, moral-cognitive motives and value components of sex education were defined, the essence and contents of sex education in modern conditions of educational reforms and development were distinguished.
- The problem of sex education in the works of Antic philosophers and classical educators were studied and analyzed, the existing rich historical experience in this sphere and its applicability in the conditions of secondary education development and predicted reforms in the field of sex education were revealed,
- The pedagogical model of sex education in junior and high schools was developed, the place and role of sex education and its mutual connections with other educational components in comprehensive system of education was redefined and substantiated theoretically.
- The pedagogical conditions of effective implementation of sex education in secondary and high schools which may be introduced in educational-training process of the proposed subject of “Basics of sex education”, as well as in the activities of standard developing for the aforementioned subject were substantiated theoretically and approved experimentally.

**Theoretical significance of the research:**

- The conceptual questions of junior and high schools students' sex education were completed and concretized. Therefore, the present study is a contribution to justification and approval of the theory of sex education,
- The understanding of content and essence of sex education, sex and age features of transition phases and theoretical importance of sex education in the complete system of education were clarified and specified.
- Research results include theoretical propositions and approaches that expand our knowledge and understanding of school sex education, reveal the pedagogical conditions of its organization in school educational-training process.

**Practical significance of the research:**

- Implementation of proposed model of sexual education and appropriate pedagogical conditions will increase the efficiency of students' sex education process,
- Teaching materials and proposed approaches verified experimentally can be guaranteed and implemented in schools, medical-psychological centers, in children's family sex education, teachers' training and qualification increasing processes,
- Conclusions of the study results may be implemented in the complete system of junior and high school education, educational-training process of the proposed subject of

“Basics of sex education”, as well as in the activities of standard developing for the aforementioned subject.

**Reliability and validity of the survey results** is supported by the theoretical analysis of the research material. For this purpose complex methods corresponding with the research purposes were used, as well as mathematical analysis of research results.

**The following ideas are presented for defense:**

1. Sex education is a component of an integral system. It is closely related to other components of the education. In order to create a system of sex education, to set the tasks of sex education and resolve them it is important to clarify, define and combine the concepts of sex education, analyze them critically.
2. The content of teenagers' sex education is based on spiritual values, national traditions and historical and cultural traditions, as well as on the rich historical experience and possibilities of its applicability due to social-psychological factors of sexual behavior ensuring the efficiency of the process of sex-role socialization of teenagers in modern society.
3. Sexual culture is a personal quality, the result of sex education in social institutions. Its standards are value orientations, basics of sexual health protecting knowledge, moral behavior.

Person's sexual culture is part of the general culture, a way of settling in socio-cultural environment through sexual behavior. It is directed to the continuation of the human race, satisfying the bio-social, hedonistic, moral, aesthetic interests, cognitive, communication, compensational and creative needs.

4. The pedagogical model and conditions promoting the effectiveness of sex education are including methods, skills and tools set that are correspond with the logic of the development of sexual culture.

5. The process of schoolchildren's sex education is being organized in 3 directions:

- Through activities of moral-sex and gender education of parents,
- In teaching process,
- During preferred and extracurricular activities.

Based on the research results 8 scientific articles are published.

